# Արձանագրություն N 2

## ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/6 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

25.12.2025թ.
ք. Երևան ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Նալբանդյան |
| Անդամներ՝ | Ն. Փինաչյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

### 1. Գնային առաջարկի ներկայացման և արդյունքների գնահատման մասին

(Ա. Նալբանդյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 Գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին՝ «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ին, 22.12.2025թ. էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/6 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու հրավեր:

1.2 «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝

ՀՀ դրամ

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ | 11 000 000 | 11 000 000 | 0 | 11 000 000 |

1.3 «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0*

### 2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Նալբանդյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետը՝ ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0*

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Նալբանդյան)

3.1 Սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշման և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պետական գնման պայմանագիրը կնքել ընտրված մասնակից «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի հետ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0*

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Նալբանդյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------- Ա. Նալբանդյան

Անդամներ՝ ---------------- Ն. Փինաչյան

---------------- Հ. Գինովյան

---------------- Տ. Կոմիտասյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------- Ա. Մանուչարյան